ճակում, թեւում է, ծալապատիկ նստած, երկու ձեռքերը վեր բարձրացրած, բռնել է Յիսուսի ոտքերի տակի գերանը, ո՞վ է նա, դժուար է մեզ կռահել։

Երկրորդ երեսը պատուանդանի մասը



Պատկ. 93

փչացած, իսկ կոթողի երեսին երկու ֆիգուր իրար վերայ կանգնած (Պատկ. 92). ներքեւինը փոքր, մօտաւորապէս նոյն դիրքով եւ զգեստաւորութեամբ, ինչպէս Դանիէլն էր։ Վերեւի ֆիգուրի զգեստը նոյնն է, միայն տարբեր ձեւով հագնուած, որով եւ մանրամասնութիւն ենք ստանում. ներքնազգեստը, անդրավարտիկը եւ գօտին նման Դանիէլին կամ ներքեւի մարդուն, բայց վերնազգեստը թեւաւոր է, աջ կողմից վերնազգեստը յետ է ձգել ուսի վերայ, որով բացուել է ամբողջ աջ կողմը վերից վար, աջով խաչակնքում է։ Իսկ ձախ կողմից վերնազգեստը կախուած է ցած, ծածկելով ամբողջ կողմը. վերնազգեստի թեւը որ չէ հագած, կախուած է ցած։ Պարանոցի տակ վերնազգեստը ճարմանդուած է։ Դէմքը փչացած է, երեւում է միայն բոլորակ գլխարկի մի մասը, վերից վար գծերով մասերի բաժանուած,